

Հետազոտական աշխատանք

Թեմա՝

«Օտար լեզուների ուսուցումը երաժշտության և խաղի միջոցով»

Ուսուցչուհի՝

Մնացականյան Մարիանա

Առարկա՝

Թուսաց լեզու

Ղեկավար՝

Համբարձումյան Ն.

Դպրոց՝

Սևանի Վ. Կարապետյանի անվ. N 3 հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
1. Երևոյցներով եւ հարկի Միջոցով ՕՏԱՐ Լեզուներու Ուսուցումը Հիմնադրուելու.....	5
2. ՕՏԱՐ Լեզուներու Ուսուցումը Երևոյցներով եւ հարկի Միջոցով (Ռուսերէնի Օրինակով).....	8
Եզրակացություններ եւ Առաջարկություններ.....	17
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	18

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Ժամանակակից աշխարհում օտար լեզուների ուսումնասիրությունը գնալով ավելի տարածված է դառնում: Մարդիկ տարբեր երկրներ են մեկնում ոչ միայն դրանց մշակութային հուշարձաններին ծանոթանալու, բնության գեղեցկությունը տեսնելու և գնահատելու, այլև սվյալ լեզուն սովորելու, նաև կրթություն ստանալու համար: Օտար լեզուների ուսուցման ընթացքում հաճախ ֆերականական նյութի յուրացման հետ կապված խնդիրներ են առաջանում ուսումնառության տարբեր փուլերում: Այս հանգամանքները ուսուցչից պահանջում են ստեղծագործական մեծ աշխատանք՝ առկա ուսումնական միջոցներից առավել նպատակահարմարն ընտրելու և լրացուցիչ ուսումնական նյութեր (վարժություններ և ֆերականական խաղեր) ստեղծելու հարցում:

Ուսումնական գործընթացն ավելի արդյունավետ դարձնելու համար ուսուցիչները դասապրոցեսում ակտիվորեն օգտագործում են խաղերը: Խաղի ընթացքում իրականացվում են հաղորդակցական և լեզվական կարևորագույն գործառույթները: Այս հետազոտական աշխատանքի արդիականությունը պայմանավորվում է նրանով, որ օտար լեզուներ սովորեցնելիս հաճախ օգտագործվում են ուսուցման փոխգործուն (ինտերակտիվ) մեթոդներ, որոնցից են խաղը և երաժշտությունը: Դերային խաղի միջոցով նմանակվում են կյանքի իրավիճակները, միասին լուծվում խնդիրները և այլն: Այսինքն՝ ուսուցումը տեղի է ունենում ուսուցչի և բոլոր աշակերտների ակտիվ փոխազդեցության պայմաններում: Խաղերը, որպես օտար լեզուների ուսուցման միջոցներ, օգնում են այլալեզու սովորողներին հարմարվել նոր լեզվական և մշակութային միջավայրին: Խաղային և երաժշտական առաջադրանքները մեծացնում են սովորելու մոտիվացիան, որը նպաստում է մտածողության ակտիվացմանը, մեծացնում է ստեղծագործական գործունեությունը, խթանում է սովորողների հետաքրքրությունը սվյալ օտար լեզուն սովորելու նկատմամբ: Հատկանշական է նաև դերային խաղը՝ որպես օտար լեզուների ինտերակտիվ ուսուցման ամենաարդյունավետ մեթոդ: Երաժշտությունն ու խաղը օտար լեզուների ուսուցման գործում դիտարկվում են որպես սովորողների համար դրական մոտիվացիա ստեղծելու միջոցներ՝ օրինակ՝ ուսերենը որպես օտար

լեզու դասավանդելիս, մասնավորապես՝ դերային խաղի միջոցով: Երաժշտության և խաղի միջոցով հնարավոր է դառնում լեզվական նյութի տեղափոխումը կյանքի տարբեր իրավիճակներ, ուսուցման ակտիվ ձևերի վրա կենտրոնացումը, նախադասական գործունեության համար բարենպաստ հուզական մթնոլորտի ստեղծումը: Խաղային և երաժշտական որոշ առաջադրանքներ ուղղված են օտար լեզու սովորողների հաղորդակցման հմտությունների զարգացմանը:

Հետազոտության նպատակը: Այս աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել և վերլուծել երաժշտության և խաղի միջոցով օտար լեզուների ուսուցման հնարավորությունները:

Հետազոտության խնդիրները: Մեր հետազոտության նպատակից ելնելով՝ առաջադրել ենք հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել և վերլուծել հիմնահարցի վերաբերյալ գրականություն:
2. Դիտարկել երաժշտությունը և խաղը որպես օտար լեզուների ուսուցման արդյունավետ միջոց:
3. Վերհանել երաժշտության և խաղի միջոցով օտար լեզուների ուսուցման արդյունավետությունն ու հնարավորությունները:

1. ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԽԱՂԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐ ԼԵՂՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ

ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Գլոբալացվող աշխարհում անում է հետաքրքրությունը օտար լեզուների՝ որպես ազգամիջյան և միջմշակութային հաղորդակցության միջոցների նկատմամբ: Մարդը սոցիալական էակ է: Նա ապրում է հասարակության մեջ և, հետևաբար, կարող է և պետք է շփվի այս հասարակության մյուս անդամների հետ: Օտար լեզուների ուսուցումը ապահովում է միջմշակութային հաղորդակցություն, որն օգնում է կապեր հաստատել տարբեր ժողովուրդների և մշակույթների ներկայացուցիչների հետ: Այն սահմանվում է որպես տարբեր լեզվական մշակույթների ներկայացուցիչների միջև տեղեկատվության ուղղակի կամ անուղղակի փոխանակում:

Օտար լեզուների ուսուցման ժամանակակից հայեցակարգը ներառում է ոչ միայն լեզվի, այլև այդ լեզուն կրող ժողովրդի մշակույթի յուրացում, քանի որ միջմշակութային երկխոսությունը պահանջում է փոխըմբռնում, և ոչ միայն ասվածի ըմբռնում կամ պատասխանելու կարողություն: Բազմաթիվ գիտական աշխատություններում դիտարկվում են ներկա վուլում օտար լեզու դասավանդելու խնդիրները և դրանց լուծման ուղիները (Efremova, 2010. Starchikova, 2017. Belaya, 2011. Solovova, 2006), այդ թվում՝ միջմշակութային հաղորդակցության խնդիրներ (Болатбаева, 2015, Вотинов, Кунанбаева, 2005): «Օտար լեզվի ուսուցում» հայեցակարգը առաջարկվում է հասկանալ ոչ թե օտար լեզվի պարզ ուսուցումը, այլ օտար լեզվի միջոցով այլ մշակույթին հաղորդակցումը: Ներկայումս այլ մշակույթին հաղորդակցումը փոխկապակցվում է ուսուցման նոր վերջնականատակին¹: Հատկանշական է նաև այն պնդումը, որ օտար լեզուները որպես հաղորդակցության միջոց ուսումնասիրելու հիմնական խնդիրը լեզուների ուսումնասիրությունն է՝ այդ լեզուներով խոսող ժողովուրդների աշխարհի և մշակույթի հետ

¹ Кунанбаева, С. С. Современное иноязычное образование: методология и теории. Алматы: Эдельвейс. 2015, с. 29.

անխզելի միասնության մեջ²: Այսօր առաջին պլան է մղվել օտար լեզուները և մշակույթները մայրենի լեզվի և սեփական երկրի մշակույթի պրիզմայով ուսուցանելու գաղափարը՝ դրանց համեմատության և համադրության միջոցով:

Այսպիսով, այս կամ այն օտար լեզվի ուսուցումը չի ենթադրում և ներառում միայն լեզվական-ֆերականական գիտելիքների ուղղակի փոխանցում երեխային, այլ՝ դրա միջոցով նաև սվյալ լեզուն կրող ժողովուրդների մշակույթին հաղորդակցման ապահովում, իսկ այդ հարցում անգնահատելի է երաժշտության՝ որպես մշակութային տարրերից մեկի և խաղի ուսուցողական և զարգացնող դերը:

Երաժշտության և խաղի միջոցով օտար լեզուների ուսուցման գործընթացը տեղի է ունենում ուսուցչի և բոլոր աշակերտների ակտիվ փոխազդեցության պայմաններում, որի արդյունքում ձևավորվում են սովորողների հիմնական կոմպետենցիաները՝ հաղորդակցական, լեզվաբանական և մշակութանական:

Խաղի մեթոդը (օրինակ՝ դերային խաղ) օտար լեզուների ուսուցման հարցում դիտարկվում է որպես ճանաչողական գործընթացի ակտիվացման միջոցներից մեկը, որով սովորողները տիրապետում են սվյալ օտար լեզվի հաղորդակցական վարքի առանձնահատկություններին:

Երաժշտության և խաղի միջոցով օտար լեզուների ուսուցման կարևորությունը հիմնավորվում է նրանով, որ օտար լեզու սովորելու երեխաների ցանկության խթանման լավագույն շարժառիթներից մեկը հենց այլ ազգերի մշակույթին հաղորդակից դառնալու, դրա համատեքստում՝ սեփական երկրի մշակույթը նորովի արժևորելու գրավչությունն է: Իսկ երաժշտությունը, երաժշտական ու դերային խաղերը միջմշակութային հաղորդակցության լավագույն միջոցներից են: Այսինքն՝ օտար այս կամ այն լեզուն սովորել ցանկացող երեխան պետք է գիտակցի դրա կարևորությունը, օգտակարությունը, այն է՝ այդ գործընթացն ընկալի որպես ոչ միայն գուտ սվյալ լեզվի, այլև սվյալ լեզուն կրող ազգերի ու ժողովուրդների արժեհամակարգի, մշակութային արժեքների ու կյանքի հիմնական առանձնահատկությունների իմացություն, և դրա հիման վրա՝ գնահատողական վերաբերմունք ձևավորի

² Василик М.А. Основы теории коммуникации. М. 2003. Гардарики. с. 275.

ինչպես վերջիններին, այնպես էլ սեփական ժողովրդի ու երկրի մշակույթի հանդեպ, կարողանա նիւտարժևորել ու վերագնահատել այն: Սա մեծապես կնպաստի լեզուների ուսուցման գործընթացի արդյունավետության բարձր մակարագակ ապահովելուն:

Օտար լեզուներ դասավանդելիս խաղերի կիրառման մեթոդիկան նոր չէ. տարեկան հրատարակվում են այս թեմային նվիրված բազմաթիվ հոդվածներ և ժողովածուներ: Ինչու է այս մեթոդիկան այդքան տարածված: Դա շատ պարզ է. խաղերը օտար լեզուների դասերին օգնում են սովորողներին հարմարվել նոր լեզվական և մշակութային միջավայրին:

Խաղի ձևով իրականացվող ուսուցումը մեծացնում է աշակերտների խոսքային ակտիվությունը, իսկ ուսուցիչը դառնում է դիտորդ: Դրա հիմնական նպատակն է ուղղել սխալները՝ դրանց հետագա վերլուծությամբ և ուղղման հնարավորությամբ:

Խաղը թույլ է տալիս ուսուցչին գնահատել գիտելիքները ոչ պաշտոնական միջավայրում և սովորողների համար նվազագույն լարվածությամբ:

Որպես դրական կետեր՝ պետք է նշել սովորողների բարձր մոտիվացիան, խաղ խաղալու հանույժը, հուզականությունը, սրբակի հմտությունների և կարողությունների ձևավորումը, մասնավորապես՝ ձեռք բերված գիտելիքները կիրառելու կարողությունը, իսկ խաղից հետո ֆննարկումն օգնում է ամրապնդել այդ հմտություններն ու կարողությունները:

Օտար լեզուների արդյունավետ ուսուցման համար կարևոր է խաղի համադրումը մեթոդական այլ հնարների հետ, այդ թվում՝ երաժշտության: Արդյունավետ ուսուցման համար կարող են օգտագործվել խաղերի ձևով ներկայացված երգեր և առաջադրանքներ: Անկասկած, մեծ է խաղային և երաժշտական գործունեության համադրման նշանակությունը, քանի որ դրանք սովորողների համագործակցային կարողությունների, ակտիվության ավելացման, դասագործընթացում առավելագույնը ներգրավելու լավագույն միջոցներից է: Արդյունավետ կարող են լինել նաև երաժշտական խաղերը, որոնք նպաստում են երեխաների ինչպես խոսքի զարգացմանը, բառերը նիւտարտասանելուն, դժվար արտասանվող բառերը

հստակ, հասկանալի արտաբերելու կարողության ձևավորմանը, այնպես էլ՝ լեզվական գիտելիքները պլուրալ ընկալելու և գործնականում կիրառման հեղինակավոր յուրացնելուն:

2. ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԽԱՂԻ ՄԻՋՈՑՈՎ (ՌՈՒՍԵՐԵՆԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Ռուսերենը որպես օտար լեզու դասավանդելիս կարևոր գործոն է ոչ միայն լեզվական և խոսքային հմտությունների զարգացումը, այլև կյանքի որոշակի իրավիճակում այդ հմտությունները նիշտ օգտագործել սովորելը:

Ուստի անհրաժեշտ է յուրաքանչյուր դաս անցկացնել այնպես, որ սովորողները կարողանան զբաղվել լեզվական նյութի մշակմամբ կռնկրետ խոսքային իրավիճակում: Եվ այստեղ ուսուցչին օգնության են հասնում խաղերը, որոնք օգնում են ավելի արդյունավետ դարձնել նոր նյութի նախաձեռն և յուրացման գործընթացը:

Ուսուցման խաղային ձևը հնարավորություն է տալիս ավելի ակտիվորեն ամրապնդել հինը և ձեռք բերել նոր խոսքային հմտություններ և կարողություններ: Մշտական խոսքային ակտիվությունը և խոսքի տարրերի կրկնությունները, որոնք մոտիվացված են խաղով, միապաղաղության զգացում չեն առաջացնում: Խաղի ընթացքում ստեղծվում է անկաշիանդ մթնոլորտ, որը նպաստում է ոչ միայն լեզվական պատճենի վերացմանը, այլև սովորողների հաղորդակցական ներուժի լիարժեք իրացմանը: Տեղի է ունենում նոր նյութի և այն գիտելիքի արդիականացում, որը գտնվում է պասիվ պահուցում:

Ռուսերենը որպես օտար լեզու դասավանդելիս լայն տարածում են գտել դերային խաղերը: Ի՞նչ է դերախաղը: Սա, առաջին հերթին, մեթոդական հնար է, որը պատկանում է օտար (ուսուցչին) լեզվի գործնական գիտելիքների դասավանդման ակտիվ մեթոդների խմբին: Դերախաղի ընթացքում աշակերտները բաժանվում են ըստ դերերի և տվյալ թեմային համապատասխան խաղարկվում են հաղորդակցման

իրավիճակներ: Իրական կյանքի իրավիճակների ստեղծումը ուսուցչին հնարավորություն է տալիս կայուն հետաքրքրություն գարգացնել ուսերեն սովորելու նկատմամբ: Դերային խաղը գարգացնում է նաև խոսքը, խոսքային վարվելակարգը, տրամաբանական մտածողությունը, առաջադրված հարցերի պատասխանները գտնելու և, որ ամենակարևորն է, միմյանց հետ շփվելու կարողությունը:

Ռուսաց լեզվի ուսուցման գործընթացում սովորողներին առաջարկվում են իրավիճակներ, որոնց կարող են հանդիպել իրական կյանքում, օրինակ՝ «Ողջույն և ծանոթություն», «Հյուրատուն», «Ճաշարանում», «Խանութում», «Բանկում» և այլն: Դերային խաղերը պայմանականորեն բաժանում են սոցիալականի և բիզնեսի:

Սոցիալական խաղերի նպատակը սոցիալական ուղարում օտարալեզու հաղորդակցման հմտությունների և կարողությունների ձևավորումն է, վարձագծի մշակույթի բարելավումը: Պրոֆեսիոնալ հաղորդակցություն սովորեցնելիս օգտագործվում են բիզնես խաղեր:

Ուսուցիչը առաջարկում է իրական իրավիճակներ, որոնց կարող են հանդիպել սովորողները կյանքում, ինչը սուբյեկտիվ մոտիվացիա է ձևավորում: Օրինակ՝ հանդիպում՝ պատմական, ընկերական, ընտանեկան և այլն: Բայց պետք է նշել, որ խաղի սյուժեի գարգացման առաջատար դերը միշտ պատկանում է ուսուցչին, և դրա իրականացումը պահանջում է մանրակրկիտ նախապատրաստություն: Ուսուցիչը պետք է լավ մտածի խաղի սյուժեն՝ հաշվի առնելով նախկինում ուսումնասիրված բառային և ֆերականական նյութը. սովորողներին լսել տա և իրենց հետ կրկնի խոսքային մոդելները, ինչպես նաև բաց թողնված բառային միավորներով մոդելները. փոխակերպել մոդելի տվյալները, նմանակել սեփական խոսքային իրավիճակը:

Կախված բառային և ֆերականական նյութից՝ դասի նպատակները կարող են փոխվել: Օրինակ, «Մթերքներ» բառային թեմայի և «Քանակական քվանտներ» ֆերականական թեմայի ուսումնասիրության հիմնական նպատակը պետք է լինի ձեռք բերված գիտելիքների գարգացումը և շուրջ խոսքային հմտությունների ձևավորումը այս թեմաներով միաժամանակ: «Խանութում» իրավիճակը կարող է

ուսուցանվել սովորողներին «Սնունդ», «Հագուստ» թեմաներն ուսումնասիրելիս: «Իմ ընտանիքը» թեման ուսումնասիրելիս կարող ենք խաղալ «Ծանոթություն» «Ընտանեկան տոն» իրավիճակները և այլն:

Հետևյալ թեմաներն ուսումնասիրելիս կարող է արդյունավետ լինել դերային խաղերի օգտագործումը.

1. Ծանոթություն. Ողջույն.
2. Մարզը, նրա արտաքինն ու բնավորությունը. Հագուստ.
3. Գնումներ (Գնում ենք մթերքներ: Հագուստի խանութում և այլն)
4. Սպասարկման ոլորտ (փոստ և այլն)
5. Սնունդ. (Ռեստորան. Խոհանոց. Խոհարարություն)
6. Քաղաք. Կողմնորոշում քաղաքում. Տրանսպորտ. Քաղաքի մեծ խնդիրներ.
7. Բնակարանային (բնակարան. Տուն. Տնային գործեր)
8. Առողջություն. Բժշկական ծառայություն.
9. Ճամփորդություն. Հյուրանոց. Տրանսպորտ.
10. Հոբբիներ. (հետաքրքրություններ, սպորտ, արվեստ, երաժշտություն, կինո, քաղաք, հասարակական վայրեր, հանգիստ և ժամանց):

11. Հետաքրքրությունների շուրջ գրույց (Հոբբի):
12. Հյուրընկալում, Հրավեր, Այցելության էթիկետը.
13. Ուսում, կրթություն.
14. Աշխատանք. Աշխատանքի որոնում.
15. Պետական հիմնարկներ և կազմակերպություններ. Տեղեկատվական ծառայություններ

(ուստիկանություն, ֆանապարհային ուստիկանություն, բանկ, ապահովագրություն և այլն)³:

³ Яркова М.Ю. Краснюк И.Н. Роль игры как одного из приемов интерактивных технологий при формировании социолингвистической компетенции в процессе обучения иностранному (Русскому) языку. Сопоставительная лингвистика. Иркутск. 2017, №6, с. 211.

Լինելով ուսումնական գործընթացի լիարժեք մասը՝ խաղը դասի մեթոդական կազմակերպման բաղկացուցիչ մասն է և դառնում իրական աշխարհի և ուսումնական գործընթացի միջև կապող օղակ:

Ռուսերենի ուսուցման արդյունավետ մեթոդական հնար է **հարցարանը կամ հարցախաղը**: Այսպես՝ «Կյանքն այս ֆաղափում», «Իմ առօրյան» և այլն: Օրինակ՝

Օգտագործելով այս տեսակի հարցառարը, հետաքրքիր է ֆննարկել ձեր երկրում ապրող ուսանողների տպավորությունները:

Առաջադրանք. Ավարտի՛ր նախադասությունները: Ասա մեզ, թե ինչ ես զգում ... ֆաղափում, դպրոցում և այլն.

1. Իմ առաջին տպավորությունն այս ֆաղափում...
2. Երբ ես առաջին անգամ եկա այս ֆաղափ, ինձ տարօրինակ թվաց, որ ...
3. Ընդհանուր առմամբ, ֆաղափի բնակիչները ...
4. Իմ հարազատ ֆաղափի համեմատ, այս ֆաղափը...

Խաղ-ֆննարկում «Համաձայն եմ, թե ոչ».

Այս խաղը հնարավորություն է տալիս ֆննարկում կազմակերպել ցանկացած թեմատիկ նյութով և ֆննարկել տարբեր հարցեր: Այս խաղի համար պատրաստում ենք պնդումներ ֆննարկվող թեմայի վերաբերյալ, որոնց շուրջ սովորողները կարտահայտեն իրենց վերաբերմունքը, տեսակետը՝ նշելով՝ «համաձայն եմ», «համաձայն չեմ», «մասամբ համաձայն եմ»: Նրանք բաժանվում են երեք խմբի՝ ըստ խաղի տարբերակների: Օրինակ՝ ուսուցիչը կարդում է հետևյալ պնդումը՝ «Փոքր երեխաներին չի կարելի թույլ տալ հեռուստացույց դիտել» կամ «Փոքրիկներին չի կարելի թույլ տալ օգտվել բջջային հեռախոսներից», «Համակարգչային խաղերը վնասակար են նախադպրոցական տարիքի երեխաների համար»: Կախված իր պատասխանից՝ սովորողը տեղափոխվում է այդ պատասխանին համապատասխան խումբ: Այնուհետև արդյունքում ստացված խմբերին ժամանակ է տրվում ֆննարկելու իրենց կարծիքները և

դրանց օգտին փաստարկներ բերելու համար, և հրավիրվում են հանդես գալ այդ փաստարկներով: Կախված պնդումների բնույթից՝ այս խաղը կարող է լինել լուրջ կամ, ընդհակառակը, զվարճալի:

«Հորինում ենք պատմություններ» խաղը:

ա) Խումբը ստանում է թերթիկ, որի վրա ուղղահայաց տպված է այբուբենը:

Խնդիրն է՝ գրել նախադասություններ, որոնք սկսվում են համապատասխանաբար այդ տառերով: Բայց դրանք չպետք է լինեն առանձին նախադասություններ, այլ սյուժեով համահունչ տեքստ: Խմբերն իրենք կարող են պատմություն հորինել, այն կարող է կապված լինել տվյալ պահին ուսումնասիրվող թեմայի հետ: Օրինակ՝ «Վալենտինի օրը», «Ճանապարհորդություն դեպի Անտարկտիկա» և այլն: Սովորաբար տեքստերը շատ զվարճալի են լինում:

բ) Պատմության սկիզբը գրում ենք գրատախտակին: Այն պետք է լինի շատ պարզ: («Ուշ երեկո: Ես ֆայլում էի մուք փողոցով: Դա սարսափելի էր: Հանկարծ ինչ-որ մեկը բղավեց. «...») սովորողներից մեկը բարձրաձայն կարդում է գրվածը, այնուհետև շարունակում՝ ավելացնելով մի նախադասություն, որը սրամաքանդերեն կապված է գրվածի հետ: Հաջորդ ուսանողն ասում է իր նախադասությունը և այլն: Կարելի է սովորողներին հրավիրել գրելու իրենց «սկիզբները»: Այս խաղը հետաքրքիր է, քանի որ խաղի ընթացքում սովորողները ուշադիր լսում են միմյանց:

Ռուսաց լեզվի ուսուցման ընթացքում բառապաշարի հարստացման համար արժեքավոր կարող են լինել հետևյալ հարցախաղերը.

1. Երեխաների որոնման ունակություններն ակտիվացնելու համար *հարցնում ենք*. «Ի՞նչը կարող է լինել՝ դեղին, հյութալի, բուրավետ (Что может быть желтый)» (карандаш, чувство, ручка, фрукты), «կարմիր, կլոր, փայլուն-красный, круглый, блестящий» (вишня, яблоко): Տրված պատասխաններին, որոնք պետք է լինեն մենաբառ, առաջարկվում է համապատասխան հարցադրումներով վերագրել այլ հատկանիշներ՝ вкусный, красочный, сочный, сладкий, горький, светлый, красивый и т.д.:

Կարելի է այստեղ կատարել նաև համանման այլ խաղ-վարժություններ.

2. *Նշված բառախմբերից (ցանկալի է, որ բնորոշման համար ընտրվեն տարբեր իրեր, առարկաներ կամ երևույթներ, օրինակ՝ միրգ, կենդանի, գույլ և այլն) ընտրել սվյալ իրին/առարկային կամ երևույթին բնորոշները (հատկանիշերը/անվանումները), ընտրելուց հետո կարող եմք երեխաներին նաև առաջարկել իրենք ևս նշել համանման բնորոշիչ բառեր.*

Яблоко - красное, сладкое, круглое, золотистое, безобразное, серое и т.д.

Стол - деревянный, железный, крепкий, теплый, красивый, сладкий, круглый, и т.д.

Медведь - большой, мягкий, хищный, домашний, дикий, яркий и т.д.

3. *Նշե՛ք, թե բերված բնութագրումներից, հատկանիշներից որո՞նք են բնորոշ տրված իրին/առարկային կամ երևույթին.*

жарко, радостно, сухо, солнечно, холодно, жарко, тепло, снежно и т. д. -

лето.

грустный, веселый, фруктовый, мягкий, солнечный, зеленый – мальчик.

Օտար լեզուների ուսումնասիրումը սովորաբար իրականացվում է նախ՝ գրույցի միջոցով, որը գուգորվում է ուսուցչի համապատասխան հարցադրումներին համապատասխան՝ երեխաների պատասխանների արձանագրումով, դրանց շուրջ համապատասխան վերլուծությունով, որից հետո՝ առակերտները փորձում են ուսուցչի օգնությամբ ի մի բերել ձեռք բերված գիտելիքները և ամրապնդել արդեն խաղային գործունեության միջոցով: **Երաժշտական խաղերը** կարելի է նաև կազմակերպել և իրականացնել նյութի ուսումնասիրման տարբեր փուլերում: Երաժշտական տեխստերի շուրջ տարաբնույթ աշխատանքները մեծացնում են ուսուցչի ուսուցման գործընթացում հանդիպող տարաբնույթ խնդիրների հաղթահարման հնարավորությունները: Այս կամ այն երգի ընտրությունը պետք է պայմանավորվի

ուսումնասիրվող նյութի, թեմայի ուսուցման չափանիշներին առավելագույն համապատասխանությամբ: Օրինակ՝ ֆերականական նյութի ուսուցման համար արդյունավետ կլինի այնպիսի երգի ընտրությունը, որում կրկնվում են բառային և ֆերականական կառույցները: Երաժշտական տեքստերը ցանկալի է օգտագործել գոյականների և ածականների հոլովական ձևերի և բայերի ժամանակային ձևերի օգտագործման թեմաների կրկնության համար: Շատ երգերի տեքստերում լայնորեն ներկայացված է առօրյա բառապաշարը, որը տեղին է այդ բառապաշարը ներառող թեմաների ուսուցման համար: Այս բառապաշարով կարելի է կատարել լեզվական վարժություններ, օրինակ՝ ֆերականական: Օրինակ՝ երգի տեքստից գտե՛ք և գրե՛ք ձեզ խանութի խոսքի մասերը: Նման աշխատանքի արդյունքը կլինի բառի գրավոր ձևերը՝ խմբավորված ըստ խոսքի մասերի.

– *существительные* – пальто, набережная, дождь, миг, день, река, рука, мост, стихи, тень, вывески, виски, обед;

– *прилагательные* – красивом, лучший, плохи;

– глаголы – ухожу, встречу, закончится, умрёт, пойду, подняться, прочитать, улыбнусь, посмотришь, разлюбить, забыть, читать, терять, думать, хочешь, готовь;

– наречия – мило, очаровательно, мечтательно, вслед, невозможно;

– местоимения – я, тебя, кто-то, нас.

Գրե՛ք խոսքի մասեր, որոնք կարող ե՛ք հանաչել ըստ ձևային հատկանիշների (օրինակ՝ վերջավորությունների):

Նման աշխատանքի արդյունքը կգրվի բառի ձևերը՝ խմբավորված ըստ բառի հանաչելի մասերի, օրինակ

Նման աշխատանքի արդյունքը կլինի բառի ֆերականական ձևերի դուրս գրելը՝ խմբավորված ըստ խոսքի մասերի.

-о (наречия): мило, очаровательно, мечтательно, невозможно;

-у, -ить, -ать, -сь, -ишь, -ся (глаголы): ухожу, встречу, закончится, умрёт, пойду, подняться, прочитать, улыбнусь, согласишься, разлюбил, забыть, читать, терять, думать, хочешь, готовь;

-и, -я, -а, -ь, на согл. (существительные): пальто, набережная, дождь, миг, грипп, день, река, рука, мост, стихи, тень, вывески, обед;

-ий, -ом, -и (прилагательные и краткие прилагательные) красивом, лучший, плохи.

Նման ֆերականական վարժությունների նպատակն է՝ ամրագրել, ընդգծել և «գիտակցել» բառի ձևը՝ խոսքի մեջ դրա գործարքան հետագա ուսումնասիրության համար: Նմանատիպ վարժությունները զարգացնում են ֆերականական հմտություն, որը օտարալեզու գիտակցության ձևավորման հիմքն է⁴:

Հաջորդ փուլը բառարանային, բառապաշարի հետ կապված վարժություններն են: Այս դեպքում երգի բառերը խմբավորվում են ըստ թեմաների: Խմբերի անունները կարելի ատաճարկել ինֆորմացիոն գրել: Որպես կանոն, սովորողներն իրենք են առանձնացնում բառախմբերը, օրինակ՝

одежда/повседневная лексика: «пальто», «день», «обед»;

город/ландшафт: «мост», «река», «набережная», «вывески»;

части тела/ медицинская лексика: «рука», «виски», «грипп»; движение: «ухожу», «встречу», «подняться» и др.

Յուրաքանչյուր երաժշտության/երգի տեխնիկ շուրջ հարցադրումների և պատասխանների միջոցով ֆինարկումն օգնում է կապ ստեղծել ատաճարկված հարցի և երգում ներկայացվածի միջև: Կարելի է նաև ատաճարկել դուրս բերել երգի բառերը և ստացված բառերի խումբը մեկ բառով անվանել, կամ՝ բառերի այդ

⁴ Ван Я. Обучение русскому языку китайских студентов-филологов: грамматический аспект. Современная наука: актуальные проблемы теории и практики. Серия: Гуманитарные науки. 2021. № 6, с. 72.

խումբը օգտագործել՝ հորինելով մեկ այլ պատմություն: Երաժշտությունը և խաղային առաջադրանքներն արդյունավետորեն կարելի է համադրել ձևաբանության ուսուցման համար: Այսպես՝ կարելի է իրականացնել ձևաբանական խաղերից՝ բնութագրիչ երգում նկարագրված առարկան, երևույթը, իրողությունը և այլ առաջադրանքների ձևով: Կարելի է կազմել աղյուսակ, ապա երեխաներին առաջարկել քվարկել երգում նկարագրված այս կամ այն առարկայի բոլոր հնարավոր հատկանիշները, օրինակ՝ ուսուցիչը դասարանը բաժանում է 5-7 խմբերի, խմբերից յուրաքանչյուրին տրվում է մեկական առարկա և առաջադրանք՝ քվարկել այդ առարկայի հնարավորինս շատ հատկանիշներ՝ հնարավորության դեպքում դրանք դուրս բերելով երգի բառերից: Այն խումբը, որն առավել շատ հատկանիշներ կնշի, այդ խումբն էլ կհանաչվի հաղթող: Պատասխաններն ուսուցիչը գրառում է յուրաքանչյուր առարկայի համար աղյուսակում առանձնացված սյունակում:

Բառապաշարային բնույթի վարժությունների նպատակը տեխնոլոգիաների երաժշտության բառապաշարի դուրսբերումն ու ամրապնդումն է:

Երգի տեխնիկայի հետ աշխատելիս կարևոր է նաև հնչյունական կոդի հետ աշխատանքը: Այսպիսով, հնչյունական կոդին ուղղված առաջադրանքները կարող են լինել երգի արտահայտիչ կերպով կարգալու, երգը պատմելու և այն երգելու առաջադրանքները: Նման աշխատանքը կարելի է կազմակերպել ինչպես անհատական, այնպես էլ խմբակային:

Հարկ է նշել, որ բառային նյութի հետ լեզվական վարժությունների բոլոր երեք տեսակները (ֆերականական, բառաբանական և հնչյունական) նախորդում են այս հմտության զարգացմանն ուղղված խոսքային վարժություններին⁵:

Այսպիսով՝ կատարված ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ օտար լեզուների ուսուցումը կարևոր տեղ ունի և այն առավել արդյունավետ հնարավոր է իրականացնել երաժշտության, ֆերականական ու ձևաբանական խաղերի ակտիվ կիրառման և համադրման միջոցով:

⁵ Абиева Н.М., Каюда Е.Н. Песенные тексты на занятиях по русскому языку как иностранному. МИР НАУКИ, КУЛЬТУРЫ, ОБРАЗОВАНИЯ. № 2 (93) 2022, с. 7.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով երաժշտության և խաղի միջոցով օտար լեզուների ուսուցման վերաբերյալ սույն հետազոտական աշխատանքը՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

- 1.** Խաղային ֆերականական առաջադրանքները պետք է դիտարկել որպես ուսուցչի լեզվի ուսուցման հատուկ մեթոդ, թեև դրանք մոտ են սովորական վարժություններին: Նախնական նյութը սովորական ուսումնական վարժություններն են, որոնք ներկայացված են միայն հատուկ՝ խաղային ձևով: Արդյունքում՝ ուսումնական առաջադրանքները, որոնք հաճախ բավականին դժվար և ձանձրալի են, բայց անհրաժեշտ են ֆերականության գիտելիքները համախմբելու համար, ներկայացվում են խաղային ձևով, օգնում են սովորողներին հաղթահարել ուսուցչի լեզվի ֆերականական համակարգի յուրացման դժվարությունները:
- 2.** Երաժշտության և խաղային ֆերականական առաջադրանքների, ինչպես նաև երաժշտական, երգի տեքստերի օգտագործմամբ ուսուցումը, ինչպես ցույց է տալիս փորձը, զգալիորեն մեծացնում է սովորողների մոտիվացիան, որն իր հերթին նպաստում է ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:
- 3.** Երգի տեքստի շուրջ գործնական աշխատանքները արդյունավետ կարող են լինել հնչյունական, բառային, ֆերականական խնդիրների լուծման համար և նպաստել օտար լեզուների ուսուցման ակտիվ գործընթաց ապահովելուն, որը տեսական գիտելիքների գործնական տիրույթ տեղափոխելու և ամրապնդելու լավագույն միջոցներից է:
- 4.** Օտար լեզուների ուսուցման գործընթացի արդյունավետությունն ավելացնելու համար մենք կարևորում ենք ֆերականական խաղերի մշակումը և դրանց ներմուծումը ուսումնական գործընթաց:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Абиева Н.М., Каюда Е.Н. Песенные тексты на занятиях по русскому языку как иностранному. МИР НАУКИ, КУЛЬТУРЫ, ОБРАЗОВАНИЯ. № 2 (93) 2022, с. 5-8.
2. Болатбаева, А. Т. К вопросу о межкультурной коммуникации и полилингвизме в современном образовании. Астана. 2015.
3. Ван Я. Обучение русскому языку китайских студентов-филологов: грамматический аспект. Современная наука: актуальные проблемы теории и практики. Серия: Гуманитарные науки. 2021. № 6, 70- 72 с.
4. Василик М.А. Основы теории коммуникации. М. 2003. Гардарики.
5. Кунанбаева, С. С. Современное иноязычное образование: методология и теории. Алматы: Эдельвейс. 2015.
6. Яркова М.Ю. Краснюк И.Н. Роль игры как одного из приемов интерактивных технологий при формировании социолингвистической компетенции в процессе обучения иностранному (Русскому) языку. Сопоставительная лингвистика. Иркутск. 2017, №6, с. 208-213.
7. Belaya E.N. Teoriya i praktika mezhkul'turnoy kommunikatsii' [Theory and practice of intercultural communication]. Moscow, 2011. Forum Publ..
8. Starchikova I.Yu., Moshchenok G.B., Shakurova E.S. Language is as means of intercultural communications at the English lessons. Перспективы науки и образования, 2018, 5 (35), 187-192.